

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարության
և

Իրանի Իսլամական Հանրապետության
սպորտի և երիտասարդության նախարարության
միջև
սպորտի բնագավառում

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Իրանի Իսլամական Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր), առաջնորդվելով սեփական ցանկությամբ՝ զարգացնելու սպորտի ու ֆիզիկական դաստիարակության ոլորտում համագործակցության համար երկկողմ հարաբերություններ՝ նպատակ ունենալով ամրապնդելու բարեկամական հարաբերություններն ու բարելավելու փոխըմբռնումը՝ հաշվի առնելով Կողմերի պետության օրենսդրությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ

Կողմերը կաջակցեն միմյանց՝ ելնելով ընդհանուր շահերից՝ զարգացնելու և բարելավելու համագործակցությունը սպորտի և ֆիզիկական դաստիարակության ոլորտում:

Հոդված 2

Համագործակցության ոլորտներ

1. Կողմերը կարևորում են և կանցկացնեն փոխադարձ հանդիպումներ բարձրաստիճան պաշտոնյաների և փորձագիտական պատվիրակությունների միջև:
2. Յուրաքանչյուր երկրի խնդրանքով Կողմերը կապահովեն անհրաժեշտ միջոցներ տեղեկատվության փոխանակման, կրթական, գիտական և մշակութային

2. փորձի փոխանակման և սպորտի ու ֆիզիկական դաստիարակության ոլորտի ուսուցողական աշխատաժողովների կազմակերպման համար:

3. Կողմերը անհրաժեշտության դեպքում կփոխանակեն պատվիրակություններ և մարզական թիմեր՝ սպորտի ոլորտում միջոցառումներին, մրցաշարերին, փառատոներին, ճամբարներին և ընկերական հանդիպումներին մասնակցելու համար: Այդ նպատակով Կողմերը կկարևորեն համագործակցությունը երկու Կողմերի մարզական կազմակերպությունների միջև:

4. Կողմերը կփոխանակեն փորձագետներ, մրցավարներ և մարզիչներ ֆիզիկական դաստիարակության, սպորտը բոլորի համար և սպորտային բժշկագիտության բնագավառներում:

5. Կողմերը կաջակցեն միջազգային մարզական գիտական միջոցառումներին երկու երկրների փորձագետների, բժիշկների, մասնագետների և երիտասարդության մասնակցությանը:

6. Կողմերը կխրախուսեն, կաջակցեն և հետևողական կլինեն սպորտի և ֆիզիկական դաստիարակության ոլորտում հասարակական կազմակերպություններին օժանդակող հիմքերի ստեղծման համար:

7. Կողմերը կաջակցեն ենթակառուցների և մարզական միջոցների համար անհրաժեշտ տեխնիկական փորձի փոխանակմանը:

8. Կողմերը կաջակցեն միմյանց երկու երկրներում սպորտի ոլորտում անցկացվող միջազգային միջոցառումների կազմակերպման գործում:

9. Իրանական կողմը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում զուրխանե մարզաձևի զարգացմանը:

10. Կողմերը կխրախուսեն և կաջակցեն մասսայական սպորտի զարգացման հարցում փորձի փոխանակմանը:

11. Կողմերը կխրախուսեն և կաջակցեն հաշմանդամային սպորտի և առողջ ապրելակերպի ոլորտում համագործակցությանը:

12. Կողմերը կխրախուսեն փորձի փոխանակումը մարզագույքի և մարզական մարկետինգի ղեկավարման ոլորտում:

Հոդված 3

Համատեղ աշխատանքային կոմիտե

1. Կողմերը կձևավորեն համատեղ աշխատանքային կոմիտե և կնշանակեն դրա անդամներին՝ ուսումնասիրելու համար սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների կիրարկումը՝ Հուշագրի ստորագրումից հետո 60 (վաթսուն) օրվա ընթացքում գործողությունների ծրագիր նախապատրաստելու միջոցով: Մինչև

1. գործողությունների ծրագրի ժամկետի ավարտը աշխատանքային կոմիտեն կնախաձեռնի նոր ծրագրի պատրաստումը:

2. Յուրաքանչյուր Կողմի խնդրանքով Համատեղ աշխատանքային կոմիտեն կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները համագործակցության իրականացումը վերահսկելու նպատակով հանդիպում կազմակերպելու համար, ինչպես նաև կառաջարկի լուծումներ գործողությունների ծրագրին առնչվող ցանկացած խոչընդոտ վերացնելու համար առկայության դեպքում: Այդ հանդիպումները հաջորդաբար կգումարվեն Կողմերի պետությունների տարածքում՝ առնվազն տարեկան մեկ անգամ:

Հոդված 4

Գործողությունների պլան

Սույն Փոխըմբռնման հուշագրով սահմանված համագործակցության հաջող իրականացման համար Կողմերը կխրախուսեն և կհետևեն դրա իրականացման առաջընթացին Կողմերի միջև համաձայնեցված գործառնական փաստաթղթերի փոխանակման միջոցով:

Հոդված 5

Ֆինանսական նախապատրաստում

Գործուղող Կողմը կհոգա իր պատվիրակության ճանապարհաճախսը դեպի մյուս Կողմի մայրաքաղաք կամ մեկ այլ համաձայնեցված քաղաք և վերադարձի ուղղության համար, իսկ հյուրընկալող Կողմը կհոգա կեցության, սննդի և տեղում տրանսպորտային ծախսերը: Այլ հարակից հարցեր կկարգավորվեն փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 6

Վեճերի կարգավորում

Սույն Փոխըմբռնման հուշագրի դրույթների մեկնաբանման և կիրարկման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն կլուծվի բարեկամական ճանապարհով՝ բանակցությունների միջոցով:

**Հոդված 7
Փոփոխություններ**

Սույն Փոխըմբռնման հուշագրի Կողմերից մեկի առաջարկությամբ սույն Փոխըմբռնման հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ՝ առանձին արձանագրությունների տեսքով: Այդ արձանագրությունները կհամարվեն սույն Հուշագրի անբաժանելի մասը:

**Հոդված 8
Գործողության ժամկետը և ուժի մեջ մտնելը**

Սույն Փոխըմբռնման հուշագիրը գործում է դրա ստորագրման օրվանից 4 տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամանակահատվածով մինչև Կողմերից որևէ մեկը սույն Հուշագրի ժամկետի լրանալուց առնվազն 6 ամիս առաջ մյուս Կողմին դիվանագիտական ուղիներով գրավոր չճանուցի դադարեցման ցանկության մասին:

Սույն Փոխըմբռնման հուշագրի դադարեցումը չի ազդի ցանկացած անավարտ կամ ընթացող ծրագրերի վրա և երկու Կողմերն էլ հանձնառություն են ստանձնում ավարտին հասցնելու ծրագրերը:

Սույն Հուշագիրը կատարված է Երևան քաղաքում, 2016 թվականի դեկտեմբերի 21-ին, համապատասխանաբար՝ 1395 թվաթիվով 01-10-ՔԵ, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն, պարսկերեն և անգլերեն, ընդ որում, բոլոր լեզուներով տեքստերն էլ հավասարազոր են, և մեկնաբանման ցանկացած տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

**Memorandum of Understanding
between
Ministry of Sport and Youth Affairs
of the Republic of Armenia
and
Ministry of Sports and Youth
of Islamic Republic of Iran
in the field of sport**

Ministry of Sport and Youth Affairs of the Republic of Armenia and Ministry of Sports and Youth of the Islamic Republic of Iran (hereinafter called as the "Parties") inspired by their own desire to develop bilateral relations for cooperation in the field of sports and physical education with the aim of strengthening friendship and improving mutual understanding; while considering the legislation of the Parties.

Have reached on the following understanding:

**Paragraph -1-
General Objectives**

The Parties will assist each other based on mutual benefits to develop and improve cooperation in the field of sports and physical education.

**Paragraph -2-
Areas of Cooperation**

- 1- The Parties emphasize and follow up the mutual meeting of high ranking officials and expertise delegations.
- 2- The Parties provide necessary facilities to exchange information; to share educational, scientific and cultural experiences; and to organize sport and physical education training workshops at the request of each country.

- 3- The Parties will exchange their delegations and sport teams, as needed, in order to participate in events, matches, festivals, camps and friendly visits in the field of sport. To achieve this, the Parties will emphasize on cooperation of the Parties sports related organizations.
- 4- The Parties will exchange experts, referees and coaches in the field of Physical Education, Sport for All and Sport Medicine sciences.
- 5- The Parties will support the participation of experts, physicians, specialists and the elite youth of both countries in international sports scientific events.
- 6- The Parties will encourage, support and follow up the creation of supportive grounds for non-governmental organizations in the field of sports and physical education.
- 7- The Parties will support the exchange of technical experiences for the needed infrastructures and sport facilities.
- 8- The Parties will assist each other in holding the international events in the field of sport which will be organized in each Party.
- 9- The Iranian party will contribute development of Zur-khaneh sport at the Republic of Armenia.
- 10- The Parties will encourage and support the exchange of experience in the development of mass sports.
- 11- The Parties will encourage and support cooperation in the fields of disability sport and healthy lifestyle.
- 12- The Parties will encourage exchange of experience in the management of sports facilities and sports marketing.

Paragraph -3-
Joint Working Committee

- 1- The Parties will be obliged to form "Joint Working Committee" and to introduce its members in order to investigate how to implement this MOU through preparing an executive plan within 60 (sixty) days after signing of the memorandum. Before the executive plan is expired, the working committee will embark on preparing a new executive plan.

2- Upon request by each Party, the "Joint Working Committee" will undertake any necessary measures to hold a meeting in order to monitor the implementation of cooperation, and to offer solutions for removing any obstacles facing the executive plan. These sessions will be convened consecutively in the territory of the Parties, at least once a year.

**Paragraph -4-
Executive Plan**

For successful realization of cooperation in accordance with the MOU, the Parties will encourage and follow up the progress through the exchange of the executive documents which are agreed upon by the Parties.

**Paragraph -5-
Financial Preparation**

The dispatching Party will bear the costs of its delegation's airfare (round trip) to and from the capital or any other agreed city of the other Party; and the host Party will bear the expenses of accommodations, board and local transportation. Other related matters will be settled upon mutual consent.

**Paragraph -6-
Settlement of Disputes**

Any dispute between the Parties arising from the interpretation or implementation of this MOU will be settled through amicable negotiation.

**Paragraph -7-
Amendments**

On the recommendation of one of the Parties of this MOU changes and amendments in the form of separate protocols can be done. These protocols shall be an integral part of this MOU and shall enter into.

**Paragraph -8-
Entry into Force and Duration**

This MOU will be valid for 4 years from its signing date and will automatically be extended for the same period unless either Party notifies the other Party in writing of its intention to terminate this MOU at least six months prior to its expiration through diplomatic channels. Termination of this MOU will not affect any incomplete or running programs and both Parties are committed to complete such programs.

This MOU has been signed on 21 December 2016, in correspondence with 09.10.....
1395....., in the city of Yerevan in two original copies in Armenian, Persian and English languages, all the texts being equally authentic and in case of any divergence of interpretation, the English text will prevail.

**For the Ministry of Sport and Youth
Affairs of the Republic of Armenia**



**For the Ministry of Sport and Youth of the
Islamic Republic of Iran**

